

անոնցմէ պատմուած ցրիւ բաներուն: Կը լուսէր աչքը  
հօր, որուն զաւակը դարձած ըլլալու էր զինուորութենէն,  
կամ աղջիկը հարս ելած, Աստուծոյ հրամանով:

Ընկեր Մաթիկը կը տեսնէր, որ սա ամայութիւն-  
ներուն մէջ, ինչպէս Մոսկուայի ճիւղութեանց խորը,  
կեանքը կը քալէր իր քանի մը հիմնական ակօսներէն:  
Ամէն տեղ մարդիկ հայր էին, ու զաւակը՝ ցաւ: Ու թուր-  
քը՝ մա՛րդ:

Բայց ջարդե՞րդ: Բայց գազաննե՞րը: Ուրկէ՞ կը շի-  
նէին անոնք, սա խաղաղեկ պատկերներէն ետքը: Ան-  
ցագիրը չէին հարցներ, այնքան իր ընկերոջ զարմանքը  
տիրական կը մնար տեսարաններուն վրայ: Այդ երիտա-  
սարդին վարուողութիւնը, պաղարիւնութիւնը, ջերմու-  
թիւնն ու վստահութիւնը, քանի մը օրուան ընթացքին,  
իրեն հասկնալի ըրին ինչ որ կարդացեր էր տարիներ  
առաջ ու չէր ըմբռնած հեքիաթը հայերէ վարուած կարա-  
ւաններուն, Միջին կամ Հասարակածային Ասիայէն  
դէպի Ռուսաստան, Լվով ու Ամսթերտամ: Անշուշտ, սա  
հսկային նման պատուական երիտասարդ մըն էր պետը  
այդ կարաւաններուն, որ իր հեղինակութեամբը, կորովո-  
վը, խելքովը կերպը կը գտնէր, կիսավայրի այդ աշխարհ-  
ներէն հարիւրներով քալեցնելու իր ուղտերը, ջորիները,  
ամիսներով, այնքան այլազան վտանգներէ ազատելով  
թանկ իրեղէնները հարաւին: Անոր չտրուեցաւ առիթը  
չորպաճի Կարապետը քաջութեան արարքով մը գեղեց-  
կացած տեսնելու: Բայց տպաւորիչ՝ կռիւը չըջելու անոր  
տաղա՛նդը, երբ գազայէ մը անցած ատեննին հայհոյանքը  
ընդունեցին զինուորութենէ նոր դարձած խմբակի մը,  
որ կը խմէր: Գասապ օղլուն անվախ յառաջացաւ, ապրս-  
պրրեց կէս օխանոց մը ու խմեց բոլորին ալ կեանքին:  
Բաժնուած ատեն, հայհոյիչները դարձեր էին լաւ բարե-  
կամ «պապայէն» մնացած չորպաճի Կարապիթին: Գա-  
սապեան զարմէն սա իմաստուն շառաւիղը չմեկնաբանեց  
իր վարմունքը, այդ տեսակ բանի մը անատակ ըլլալուն:  
Ուսումնական չէր անիկա, ոչ ալ «չուկայի» այնքան մեծ-